

## ԱԾԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՈՎ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՊՈՆԶԻԱՑՈՒՄ

### ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

**Ածական + գոյական** կաղապարով բառակապակցությունները, բաղադրիչների իմաստային փոխհարաբերության տեսակետից չտարբերվելով գրաբարի նույնատիպ կապակցություններից, իրենց կառուցվածքով էապես տարբերվում են նրանցից: Եթե գրաբարում ածականը մեծ մասամբ համաձայնում էր լրացյալին, ապա ժամանակակից հայերենում ածական լրացումն իր լրացյալի հետ կապակցվում է ոչ թե համաձայնությամբ, այլ առդրությամբ: Մյուս խոսքի մասերով կազմվող բառակապակցություններում լրացումները, լրացյալի հետ կապակցվելով, արտահայտում են իմաստային զանազան հարաբերություններ: Եվ չնայած հաճախակի գործածությանը՝ ածական լրացումով գոյականական կապակցություններն իրենց ունեցած հարաբերության առումով բազմազան չեն. ածականը գոյականի հետ կապվում է «միայն որակական (որոշիչ) հարաբերությամբ»<sup>1</sup>:

Լավագույն ձևով օգտվելով մեր լեզվի ընձեռած հնարավորություններից՝ Պ. Սևակը ածական լրացումով գոյականական կապակցություններում դրանց և այլ կապակցությունների ու բառերի շարադասման հարցում ցուցաբերել է ազատություն:

Ժամանակակից գրական լեզվում, ինչպես նաև Պարույր Սևակի խոսքարվեստում հաճախակի գործածական են հատկապես որակական ածականներով գոյականական կապակցությունները: Բերենք օրինակներ՝ «Արդար լույսը դեռ նոր բացված՝ Թագավորահոր տան տանիքին Ջուռնան գլում է Սահարի...»<sup>2</sup>, «Մայրամուտի ճոխ արև... Փայլ է տվել ու զարդարել» (հ. 3, 195), «... Պետք է օջախ մաքուրը, Սիրո գողտրիկ տանիք...» (հ. 3, 136), «Պիտի ջանամ ծածկել լռությունըս հսկա, Որ դրանով, հանկարծ, քեզ չվիրավորեն» (հ. 3, 172) և այլն:

Դիտարկված օրինակներում ածականները գործածվում են փոխաբերական նշանակությամբ: Ասել է թե՛ **արդար լույս**, **ճոխ արև**, **հպարտ ձեռք**, **մաքուր օջախ**, **գողտրիկ տանիք**, **հսկա լռություն** բառակապակցություններում ածականները ստացել են գեղարվեստական որոշակի արժեք ու մակդիրային նշանակություն, և իրերն ու իրողությունները բացահայտում են հեղինակային վերաբերմունքով:

Սևակի չափածոն հատկանշվում է բազմատեսակ մակդիրների հմուտ ու ճաշակով գործածությամբ: Այսպես օրինակ՝ **կանաչ** գույնը գրական

<sup>1</sup> Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Եր., 1976, էջ 111:

<sup>2</sup> Պարույր Սևակ, Երկերի լիակատար ժողովածու 6 հատորով, հատոր 4, Եր., 1972, էջ 111: Հետագա շարադրանքում դիտարկված օրինակներից հետո կնշվեն ժողովածուի համապատասխան հատորն ու էջը:

ստեղծագործություններում հաճախ է ընկալվում որպես կյանքի խորհրդանիշ և զուգորդվում **ծառ, դաշտ** և նման այլ գոյականների հետ: Պ. Սևակը, ձևափոխելով առարկաների մնայուն հատկանիշները, իրերն ու երևույթները օժտում է ինքնատիպ հատկանիշներով: Դիտարկենք **կանաչ** ածականի կիրառության օրինակներ Սևակի չափածոյից.

*...Ձուկ դարձած՝ լողում – չէին խեղդըվում  
ճորտատիրության անփոփոխ ծովում,  
Ու ծառանում էր հեղափոխության  
Մակընթացային կանաչ այիրը: (հ. 4, 82 էջ)*

Կամ՝

*Եվ ուր որ է կգա ինքը գարունն արդեն,  
Ու պատանու նման հողը կապրի արբունք.  
Կանաչ բեղեր կաճեն նրա շրթունքներիս,  
Եվ կմազակալի անմազ դեմքը նրա: (հ. 3, 193)*

Մեկ այլ բանաստեղծության մեջ Սևակը գրում է. «Իմ կանաչ արև, Ի՞նչ մնաս բարև ...» (հ. 4, 231):

Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Պապոյանը, «Պ. Սևակը տարբերում է առարկաների էական ու պատահական, մնայուն ու անցողիկ հատկանիշները, ըստ հարկի ընդգծում է մերթ մեկը, մերթ մյուսը, գեղարվեստորեն միշտ հիմնավորելով իր ընտրած արտահայտությունների հավաստիությունն ու ճշմարտությունը»<sup>3</sup>:

Բանաստեղծի ստեղծագործություններում հաճախակի կիրառվում են նաև այնպիսի ածականներ, որոնք կարող են կապակցվել մեծ թվով գոյականների հետ, քանի որ ընդգրկում են շատ առարկաների բնորոշ հատկանիշներ: Օրինակ՝ լայն կիրառություն ունեն **սուրբ** ածականով բաղադրված կապակցությունները, ինչպես օրինակ՝ «Մարտիրոսված հայ մայրերի կոնքերը սուրբ Ուզում էին ամոթն իրենց անապատի փոշով ծածկել, Դեղին փոշով...» (հ. 4, 192), «...Մեր սուրբ մայրերի հանճարներ սնած ծիծն էին փրթում...» (հ. 4, 175), «Քսա՛ն տարի անթաղ մնաց Մի սուրբ դիակ, Սուրբ ու միակ...» (հ. 4, 216), «Իրիկնային ժամերգության սուրբ պահերին, Պատարագիչ Կոմիտասին չէ՞ որ երեկ Լսում էին հիացմունքով Ձոհրապ... Սևակ...» (հ. 4, 190), «...Ինչպե՞ս չասես, որ քեզ Պետք է սուրբ ընտանիք, Բայց ո՛չ ընտանիքի ծաղրանկար ...» (հ. 3, 136), «Մեր սուրբ սուփրայով կոշիկը սրբեց, Ոտքերը լվաց մեր հացի տաշտում...» (հ. 4, 161) և այլն:

Մեջբերված նախադասություններում գործածված բառակապակցություններն այնքան արտահայտիչ են, զգացմունքով լի, որ ինքնատիպ գեղարվեստական պատկերներ են կերտում:

Ինչպես հայտնի է, ամեն(ա)- նախածանցը, դրվելով ածականների վրա, կազմում է որակական ածականի գերադրական աստիճանը՝ ածականներին տալով *ամենից շատ* կամ *ավելի շատ ունեցող* իմաստներ: Այդ նշանակությամբ այն հոմանիշ է - (ա) գույն վերջածանցին<sup>4</sup>: Պարույր Սևա-

<sup>3</sup> Ա. Պապոյան, Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1976, էջ 264-265:

<sup>4</sup> Տե՛ս Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 188:

կը ամեն(ա)- նախածանցը դնում է նաև գոյականի վրա.

*Սուրբ խաչելության նշանը սրտին,  
Քրիստոնեական ժպիտը շրթին  
Իր «ամենագուր» ձեռքով ցարական  
Հայոց պատմությունն իբրև առարկա,  
Արգելեց բոլոր հայ դպրոցներում: (հ. 4, էջ 23)*

*Մի՞ թե մինչև հիմա ոմանք չեն հասկացել  
Դու կենդանի մարդ ես,  
Ամենամարդ մարդը,  
Սիրո՞ղ մարդը... (հ. 3, 135)*

«Ամենամարդ մարդ» անսովոր կապակցությունը արտացոլում է մարդու հիմնական էությունը: **Ամենամարդ** բառի փոխարեն բանաստեղծն ուրիշ ի՞նչ բառերով կարող էր ներկայացնել մարդուն: Ոճական ինքնատիպ արժեքով է հատկանշվում նաև **ամենագուր** բառը: Սևակը բազմաթիվ ածականներ կարող էր ընտրել, բայց բանաստեղծական խոսքաշարում այդ բառերը չէին ունենա անսովոր ուժգնություն ու պատկերավորություն, ոճական ինքնատիպ արժեք ու արտահայտչականություն:

Հարաբերական ածականով լրացում ունեցող կապակցությունների բացարձակ մեծամասնությունը փոխաբերական իմաստով է հանդես գալիս Սևակի ստեղծագործություններում, ինչպես՝ «Աստվածաշունչը իր մազադաթե դեմքը դեմ կանի ու կասի կարդա՛» (հ. 4, 210), «Յուրաքանչյուրը մի հրե լեզու, Չգվում են վերև, կարծես թե ուզում Մոտիկ երկնքի կապուտակ ծովից Ջովություն ըմպել» (հ. 4, 44), «Աստվածաշնչյան այն տեսակ սիրով, որ երբ իր բառե շապիկն է հագնում, թվում է այսօր հեթանոսական, Նույնիսկ անպարկեշտ» (հ. 3, 148), «Քար ատամները գիշատիչ կամի (Ծամի հա՛ ծամի) Հաշանն են ծամում, հաշանը ոսկե» (հ. 4, էջ 48):

Ածականակերտ -ե ածանցով գոյական հիմքերից կազմված **հրե, քարե, մագադաթե, բառե, ոսկե** ածականները, կապակցվելով **ալիք, լեզու, սիրտ** և **դեմք** գոյականների հետ, ոչ թե նյութի հարաբերություն են ցույց տալիս կամ նյութից պատրաստված լինելն են բնորոշում, այլ ստեղծում են նոր, սևակյան ոճին բնորոշ և ընթերցողի համար անսովոր զուգորդություններ՝ **հրե լեզու, մագադաթե դեմք, բառե շապիկ, ոսկե հաշան**: Ասել է թե՛ նշված ածականները գործածվել են այլ հատկանիշ ենթադրող գոյականների հետ: Այս դեպքում բանաստեղծը ածանցման է դիմել առարկայի հատկանիշը խտացնելու, նրան իմաստային նոր երանգ հաղորդելու համար:

Բանաստեղծական խոսքին պատկերավորություն են հաղորդում նաև որպես հարաբերական ածական հանդես եկող հեղինակային նորակազմությունները (անհատական նորաբանությունները): «Նշված բառերը,- գրում է Լ. Եզեկյանը,- ստեղծվում են որոշակի շարժառիթներով և կազմվում տվյալ գրական լեզվում գործող բառակազմական միջոցներով»<sup>5</sup>:

<sup>5</sup> Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2003, էջ 136:

Պ. Սևակը մեծ դեր ունի գրական լեզվի բառապաշարի հարստացման գործում: Բանաստեղծը ամենասովորական ու գործածական բառային միավորով ստեղծում է պատկերավոր ու դիպուկ նորակազմություններ, որոնք երբեմն նույնիսկ կարող են ոչ սովորական թվալ: Ընդ որում՝ անհատական նորաբանության արժեք ունեցող բազմաթիվ կապակցություններում ինքնատիպությունն ու արտահայտչականությունը ապահովվում են ինչպես լեզվում եղած բառերը կապակցական նոր դրսևորումներով հանդես բերելու, այնպես էլ հեղինակային նորակազմություններով կապակցություններ ստեղծելու շնորհիվ: Վերջին դեպքում նորակերտ բառը հիմնականում հանդես է գալիս լրացման դերով: Ինչպես օրինակ՝ **փառակազմ շենք** (հ. 4, 225), **կիսարյունաքամ-գունատ ճակատ** (հ. 4, 277), **վահագնակերպ-դավթադեմ տղա** (հ. 4, 182), **սևամուրթ ամպ** (հ. 3, 190), **սուրբխորան փոր** (հ. 4, 181), **սևասուգ բերան** (հ. 4, 194), **մարդակերական ախորժակ** (հ. 4, 229), **քոյասիրահար ու քեզապաշտ երածիշտներ** (հ. 4, 226) և այլն: Նմանօրինակ նորակազմությունները որոշակիորեն ուրվագծում են բանաստեղծի լեզվական անհատական ոճը: Բանաստեղծման մեջ Սևակը հանդես է բերում նուրբ դիտողականություն և գեղագիտական բարձր ճաշակ:

Չեղինակային նորակազմությունները որքան էլ պայմանավորված են յուրաքանչյուր հեղինակի անհատականությամբ ու ոճական նախասիրություններով, այնուամենայնիվ բխում են նաև խոսքային համապատասխան միջավայրից, և դրանց գործածությունները պատճառաբանված են, քանի որ հնարավորություն են ստեղծում առավել ամբողջական և արտահայտիչ ընկալելու գեղարվեստական պատկերը: Դիտարկենք օրինակ.

*...Նա լույս էր վառ ու լույս է արդ.  
Ու կմնա միշտ լույս զվարթ,  
Չայ հարսների պտղած ծոցում,  
Չայ թռնօրոր նանիների  
Ինքնամոռաց ժպիտի մեջ... (հ. 4, 236)*

Բանաստեղծական այս փոքրիկ հատվածում ընդգծված **թռնօրոր** բառի գործածության շնորհիվ ավելի ընդգծվում, ամբողջանում և տեսանելի ու բնութագրական է դառնում իրենց թռներին օրորող, փայփայող հայ տատիկների կերպարը:

Սևակի խոսքարվեստին բնորոշ են նաև երկու, երբեմն նույնիսկ երեք միավորներից բաղկացած ածականներով կազմված կապակցությունները: Ինչպես օրինակ՝ «Անբանալի-գոց գանձարան... Կյանքըդ լինի թող տանջարան» (հ. 4, 26), «...նրանց կարեվեր քայլն էր տրոփում անժանոթ-անհայտ ճանապարհների անհատության մեջ...» (հ. 4, 296), «Եվ երկրագնդի կիսարյունաքամ-գունատ ճակատին արյունոտ մատով աղվեսագրվեց... 1915 թիվը...» (հ. 4, 277), «Կախաղաններից ճոճվող սրբերի դուրս ընկած լեզվից հպարտությունն էր անընդհատ ծորում, արհամարհանքն էր շողիքն իր թորում մարդկության վրա, այն խեղճ ու կրակ-թշվառ մարդկության» (հ. 4, 271) և այլն:

Դիտարկված օրինակներում երկու կամ երեք բաղադրիչներից կազմ-

ված հարադրային մակդիրները էլ ավելի հարուստ նրբերանգներով են բացահայտում գոյականի հատկանիշները: Հոմանշային արժեք ունեցող բաղադրիչներից կազմված հարադրությունների գործածությունները խոսքին բանաստեղծական նոր լիցք ու թարմություն են հաղորդել: Այդպիսի մակդիրների կիրառությամբ հնարավոր է դարձել նաև խուսափել խոսքի միօրինակությունից և բառերի ու կապակցությունների անհարկի կրկնություններից: Մեջբերված բանատողերում ընդգծված օրինակները երևան են հանում հետաքրքրական մի երևույթ. հոմանշային հարաբերությունների մեջ գտնվող ածականները բանաստեղծը կապակցել է առանց շաղկապի: Գրության ժամանակ այդ ածականների միջև միության գծիկ դնելով՝ դրանք մոտեցրել է հարադրական բարդություններին: Ընդ որում՝ հոմանիշային հարաբերության մեջ գտնվող անդամներից մեկը հաճախ կարող է դերբայ լինել, ինչպես՝

*Արյունապակաս – պաղած խեղճերից  
Տենդի ջերմ թվաց այն տաքությունը,  
Որ անջատվում է սրտից վառվռուն... (հ. 4, 144)*

Կամ՝

*իմ թլվա՛ տ-կակա՛ գ-կա՛յ ընկած լեզվի,  
կա՛յ ընկած՝ ի տես մի իրողության...  
կապ ընկած՝ նաև ի նշան անգոր - անկարողության... (հ. 4, 275)*

**Ածական + գոյական** կաղապարով կապակցության բաղադրիչներ հաճախ դառնում են այն ածականները, որոնք, առանձին վերցրած, լեզվական մակարդակում հոմանշային հարաբերությունների մեջ չեն գտնվում, հոմանշային շարքեր չեն կազմում, բայց փոխաբերական կիրառության շնորհիվ խոսքաշարում գործածվում են որպես նույն հասկացությունը, առարկան կամ երևույթը բնորոշող հատկանիշներ: Այդ դեպքում, ինչպես նկատում է Լ. Եզեկյանը, «կարևոր դեր է խաղում բառի փոխաբերական - արտահայտչական իմաստը»<sup>6</sup>: Այսպես օրինակ՝ **հարկադիր և կեղծ, թուխ, վարսեղ և հասուն, ամոթխած, մաքուր և լուսավոր, կեղծ և անկենդան, աշխարհասփյուռ և մազապուրծ, տարողունակ և բարեգութ, բնազդական և բուսական, մաքուր և լուսավոր** ածականները իրենց բառային իմաստներով միևնույն հոմանշային շարքի անդամ չեն. հոմանշային արժեք ձեռք են բերել միայն համատեքստում, ինչպես օրինակ՝ «...Ու տանջվում է այն հարկադիր ու կեղծ հազից...» (հ. 4, 94 էջ), «Չենուչունով վեր է կենում Մի թուխ-վարսեղ-հասուն աղջիկ...» (հ. 4, 118), «Ամոթխած, մաքուր, լուսավոր կույսեր, Որ ֆրանսերեն անգիր գիտեին...» (հ. 4, 173), «Նրանից առաջ Աշխարհասփյուռ-մազապուրծ հայեր...» (հ. 4, 227) և այլն: Մեջբերված օրինակներում ընդգծված հոմանիշների ոճական արժեքն ակնհայտ է դառնում միայն կոնկրետ գործածության դեպքում:

Ածական լրացումով գոյական կապակցությունների բաղադրիչներ հաճախ դառնում են նաև կրկնավոր հարադրությունները. դիտարկենք

<sup>6</sup> Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 211:

օրինակներ.

*...և իրենց դատարկ-դատարկ գրպանի քար լռությամբ  
ծայն են ընծայում այն ոսկիներով,  
ինչ մեզնից խլել-խժռել են վաղուց... (հ. 4, 311)*

Կամ՝

*Ու հնչում է մի ձևացո՞ղ  
Թե՞ ամաչկոտ թույլ-թույլ ծիծաղ... (հ. 4, 99)*

Առավելապես ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ հարադրու-  
թյունների գործածություններն ու հարկ եղած դեպքերում նաև բառային  
մեկ միավորի արժեք ունեցող նոր կապակցությունների ստեղծումը որոշ  
չափով նաև բանաստեղծական խառնվածքի արտահայտություն են, ան-  
հատական ոճի կարևոր բաղադրիչ:

Առարկաներն ու երևույթները իրենց բնորոշ հատկանիշներով ներկա-  
յացնելու դեպքում ևս բանաստեղծը ստեղծում է ոճական ինքնատիպ ար-  
ժեք ունեցող կապակցություններ, որոնց արտահայտչականությունը դրսե-  
վորվում է հատկապես համատեղ գործածություններում, երբ անհրաժեշտ  
է լինում առարկաներն ու երևույթները բնորոշել տարբեր կողմերից: Այդ-  
պիսի բազմաթիվ գործածություններից նշենք երկուսը.

*Պաղ եղյամբ արդեն վաղուց  
Գիշերվա մեջ անտես մաղում,  
Բոլոր քարերը անխտիր  
Ծածկում էր իր քարակ խավով... (հ. 3, 106)*

Կամ՝

*...Պետք է օջախ մաքուր,  
Սիրո գողտրիկ տանիք,  
Ուր չի կարող լինել ոչ մի կարիք  
Խաղալ «յավ ընտանիք»... (հ. 3, 136)*

Խոսքի բովանդակային կողմի հարստացմանը նպաստելուց բացի՝  
քննարկվող բառակապակցությունների հարցում Սևակն առաջնորդվել է  
բանաստեղծական միտքն ու պատկերը ավելի տպավորիչ, ոճականորեն  
ավելի նախընտրելի միջոցներով արտահայտելու նպատակադրումով: Դի-  
տարկված երկրորդ օրինակում, ինչպես տեսնում ենք, կապակցություննե-  
րի բաղադրիչների ընտրության հարցում որոշակի կարևորություն է  
տրված նաև խոսքի բարեհնչությանը, հնչյունային ներդաշնակությանը:

Սևակի ստեղծագործություններում տաղաչափական, ոճական նպա-  
տակներով պայմանավորված, գոյականական բառակապակցության ա-  
ծական լրացումները կարող են և՛ նախադաս լինել, և՛ հետադաս, ինչպես  
օրինակ՝ «Ինքը թե՛ կրակ՝ մի՞թե, Վարդապետ, Բովանդակ կյանքում հար  
սառել ես դու...» (հ. 4, 149), «Կիտվեցին անգիր, բացվեցին գրով նույն  
սուտ - սրբերի անսուրբ ձեռքերով» (հ. 4, 146), «Լեռը ծակելով՝ Մենք նրա  
միջով ջուր էինք տանում Ու շռայլ բանում Մեր այգիների այրի արգան-

դին...» (հ. 4, 243), «...Որ անջրդի լեռնալանջերի շիկացած հողից Իր փորը վառած՝ Կիսաբաց բերնով Երկրնքից անջուր Գոնե անձրևի շիթ էր պահանջում...» (հ. 4, 243), «...քանդեցին երկինք մի լուրթ...» (հ. 4, 187), «Ու ջնարակվեց հողը արյունով լռած բերանը՝ սարսափով խոսուն, օդը՝ տագնապով անտեղիտալի, իսկ ահից կապտած երկինքը լեղակ՝ անխուփ աչքերի մեռելափայլով...» (հ. 4, 270) և այլն:

Այսպիսով՝ առանձնապես մեծ է ածական լրացումով գոյականական կապակցությունների դերը բանաստեղծական խոսքի բովանդակության խորացման, ոճական արտահայտչականության ուժեղացման գործում: Սևակի ստեղծագործություններում հիմնականում մակդիրային գործածությամբ հանդես եկող ածականը լայն հնարավորությամբ է օժտված առարկաների, երևույթների ներքին խորհուրդը արտահայտչականորեն սեղմ ձևով ներկայացնելու գործում:

**ЛУСИНЕ ОГАННИСЯН – *Субстантивные словосочетания с адъективным дополнением в поэзии Паруйра Севака.*** – В статье показано, как субстантивные сочетания с адъективными дополнениями помогают углубить поэтическое слово, усилить его стилистическую выразительность. Подчеркнуто, что в стихах П. Севака прилагательное, несущее функцию эпитета, наделено способностью сжато и выразительно приоткрывать потайной мир предметов и явлений. Оно придаёт поэтическому слову благозвучность и звуковую гармонию, обогащая тем самым содержательную сторону текста.

**LUSINE HOVHANNISYAN – *The Noun Word Combinations with Adjective Attributes in Paruyr Sevak's Poetry.*** – The noun word combinations with adjective attributes have a considerable role to make the poetic diction content deeper and to emphasize their stylistic expressiveness. The adjective used in Sevak's literary works has an ample opportunity to introduce inherent meaning of things and facts in an impressively concise manner. It plays an essential role in the poetic diction concerning the harmony of speech and sounds, depiction and enrichment of speech content.